

Հարց 1. Ի՞նչ է սոցիալական վճարը:

Սոցիալական վճարը օրենքով սահմանված չափով Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար է, որի նպատակը սոցիալական վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից բացի, կենսաթոշակային լրացուցիչ եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է:

Հարց 2. Ովքե՞ր են համարվում կուտակային բաղադրիչի մասնակիցներ:

Մասնակցությունը կուտակային բաղադրիչին հիմնված է պարտադիրության և կամավորության սկզբունքների վրա:

Կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցելու են 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողները և անհատ ձեռնարկատերերը:

Կամավորության սկզբունքով կուտակային բաղադրիչին կարող են մասնակցել մինչև 1974թ. հունվարի 1-ը ծնված՝ աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողները, անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից:

Ինքնազբաղված անձ է համարվում օրենքով չարգելված որևէ գործունեությունից եկամուտ ստացող (բացառությամբ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամտի, ձեռնարկատիրական եկամտի և պայմանագրային եկամտի) վարձու աշխատող և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից եկամուտ ստացող գյուղատնտեսական արտադրանք արտադրող, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա եկամուտ ստացող, «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող արտոնագրային վճար վճարող), ինչպես նաև «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության օրենքով սահմանված՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատեր:

Հարց 3. Ո՞ր եկամուտներն են հանդիսանում սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ:

Սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են՝

- 1) աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները.
- 2) ձեռնարկատիրական եկամուտը.
- 3) որպես ինքնագրադված անձ՝ ստացված եկամուտները:

Հարց 4. Որքա՞ն է կազմում սոցիալական վճարի դրույքաչափը աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողների համար:

Աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներից սոցիալական վճարը կատարվում է հետևյալ չափերով՝

- 5 տոկոսի չափով, եթե աշխատավարձի ամսական չափը չի գերազանցում 500 000 դրամը,
- 10 տոկոսի և 25 000 դրամի տարբերության չափով, եթե աշխատավարձի ամսական չափը գերազանցում է 500 000 դրամը:

Ընդ որում, մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը պետությունը կշարունակի կատարել վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձանց համար սոցիալական վճարի կեսը, սակայն ոչ ավել, քան 12 500 դրամ:

Օրենքով սահմանվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմ՝ ամսական՝ նվազագույն ամսական աշխատավարձի 15-ապատիկը (ներկայումս՝ 1020 000 ՀՀ դրամ), տարեկան՝ նվազագույն ամսական աշխատավարձի 180-ապատիկը (ներկայումս՝ 12 240 000 ՀՀ դրամ):

Եթե անձը եկամուտ է ստանում մի քանի աղբյուրից, ապա սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմը գերազանցող գումարներից գործատուի (հարկային գործակալի) կողմից հաշվարկված և փոխանցված (գանձված) գումարները Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վերադարձվում են անձին:

Օրինակ 1. 2020 թվականի հուլիս ամսվա վարձու աշխատողին հաշվարկված աշխատավարձը կազմել է 700 000 դրամ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողի համար կուտակային հատկացումը կկազմի 70 000 դրամ, որից վարձու աշխատողի աշխատավարձից փաստացի պահվող սոցիալական վճարի գումարը կկազմի 32 500 դրամ, վարձու աշխատողի համար Արցախի պետական բյուջեից հատկացվող գումարը՝ 37 500 դրամ (12 500+25 000):

Օրինակ 2. 2020 թվականի հուլիս ամսվա վարձու աշխատողին հաշվարկված աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները կազմել են 1 300 000 դրամ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողի համար կուտակային հատկացումը կկազմի 102 000 դրամ, որից վարձու աշխատողի աշխատավարձից փաստացի պահվող սոցիալական վճարի գումարը կկազմի 64500 դրամ, վարձու աշխատողի համար Արցախի պետական բյուջեից հատկացվող գումարը՝ 37 500 դրամ (12 500 + 25 000):

Հարց 5. Անհատ ձեռնարկատերն ի՞նչ դրույքաչափով է կատարում սոցիալական վճարները:

1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անհատ ձեռնարկատեր հանդիսացող և առևտրի հարկով, հաստատագրված վճարներով և (կամ) ընդհանուր հարկման համակարգով հարկվող մասնակիցը տարեկան կատարում է սոցիալական

վճար հաշվարկման օբյեկտի (եկամտային հարկով հարկման ենթակա եկամուտ) եկամտի 5 %-ի չափով:

Սահմանվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի (եկամտային հարկով հարկման ենթակա եկամուտ) առավելագույն տարեկան շեմ՝ նվազագույն ամսական աշխատավարձի 180-ապատիկը (ներկայումս՝ 1020 000 ՀՀ դրամ):

Հաշվետու տարում սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ (եկամտային հարկով հարկման ենթակա եկամուտ) չհայտարարագրելու դեպքում անհատ ձեռնարկատերերը չեն կատարում սոցիալական վճարներ: Այս դեպքում այս մասնակիցների համար պետական բյուջեից նույնպես հատկացումներ չեն կատարվում:

Հարց 6. Ի՞նչ կարգով են կատարվում սոցիալական վճարները նվազագույն աշխատավարձից:

Նվազագույն աշխատավարձ ստացող մասնակիցների համար սոցիալական վճար կատարում է գործատուն՝ համապատասխան չափով բարձրացնելով անվանական աշխատավարձը:

Եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և սոցիալական վճարը կատարելուց հետո անձի տնօրինվող եկամուտը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի չափից: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ այն կազմում է 68 000 ՀՀ դրամ:

Հարց 7. Ի՞նչ ժամկետներում և ընթացակարգով է մասնակցին վերադարձվում մի քանի աղբյուրից ստացված եկամտից փոխանցվող՝ սոցիալական վճարի առավելագույն չափը գերազանցող գումարը:

Մի քանի աղբյուրից աշխատավարձ ստացող այն մասնակիցներին, որոնց կողմից վճարվող սոցիալական վճարի չափը գերազանցում է օրենքով սահմանված

առավելագույն շեմը, հարկային մարմինը ուղարկում է ծանուցում վերադարձվող գումարի առկայության մասին:

Առաջին անգամ այդ ծանուցումն ուղարկվում է հաշվետու ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկով և (կամ) տարեկան եկամուտների մասին հաշվարկով հաշվարկված սոցիալական վճարի մարման օրվանից հետո 10-օրյա ժամկետում՝ էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ փոստային առաքմամբ:

Վերադարձվող գումարները փոխանցելու նպատակով ծանուցման մեջ նշում է կատարվում բանկային տվյալները ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Մասնակցի կողմից իր գտնվելու վայրի հարկային մարմին բանկային տվյալները ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը գանձապետարան է ներկայացնում վճարման հանձնարարական:

Հետագայում վերադարձվող գումարների առաջացման դեպքում մասնակցին ծանուցում չի ուղարկվում, իսկ հանձնարարականը գանձապետարան է ներկայացվում վերադարձվող գումարների առաջացման օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերադարձվող գումարները մասնակցի բանկային հաշվին են փոխանցվում հանձնարարականը ներկայացնելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարց 8. Ի՞նչ է կուտակային հատկացումը:

Կուտակային հատկացումը սոցիալական վճար կատարող անձի համար (օգտին) կատարվող դրամական հատկացում է, որը ձևավորվում է անձի կատարած սոցիալական վճարներից և Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից:

Հարց 9. Ինչպե՞ս է ձևավորվում աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողների կուտակային հատկացումը:

1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձի համար, ինչպես նաև 1964 թվականի հունվարի 1-ից մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված և մինչև 2020 թվականի հունվարի 1-ը սոցիալական վճար կատարելու պարտավորություն ստանձնած անձի համար (օգտին) կատարվող կուտակային հատկացումը ձևավորվում է սոցիալական վճարներից և Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից:

Օրենքի եզրափակիչ և անցումային դրույթների համաձայն՝ 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կուտակային հատկացման չափը (դրույքաչափը) կազմում է աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 10%-ը, որից 2.5%-ը ձևավորվում է անձի կատարած սոցիալական վճարի հաշվին, իսկ մնացած 7.5%-ը՝ բայց ոչ ավելի, քան 37500 ՀՀ դրամ որպես ԱՀ պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներ:

Հարց 10. Ինչպե՞ս է ձևավորվում անհատ ձեռնարկատիրոջ կուտակային հատկացումը:

1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անհատ ձեռնարկատիրոջ համար (օգտին) կատարվող կուտակային հատկացումը (դրույքաչափը) կազմում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի (եկամտային հարկով հարկման ենթակա եկամուտ) 10%-ը, որից 5%-ը ձևավորվում է անհատ ձեռնարկատիրոջ կատարած սոցիալական վճարի հաշվին, իսկ մնացած 5%-ը՝ բայց ոչ ավելի, քան 300 000 ՀՀ դրամ որպես ԱՀ պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներ: Եթե անհատ ձեռնարկատիրոջ տարեկան համախառն եկամուտը գերազանցի 6 000 000 ՀՀ դրամը, ապա պետական բյուջեից անհատ ձեռնարկատիրոջ կենսաթոշակային հաշվին կփոխանցվի 300 000 ՀՀ դրամ, իսկ

10%-ը լրացնելու համար մնացած գումարը կվճարվի անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Հարց 11. Արդյո՞ք մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողի համար կատարվում է կուտակային հատկացում, թե ոչ:

Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողի համար (օգտին) խնամքի արձակուրդ գնալու օրվան հաջորդող ամսվանից մինչև երեխայի 2 տարին լրանալու ամիսը (ներառյալ) կատարվում է կուտակային հատկացում՝ ամսական 8 000 ՀՀ դրամի չափով, որից՝ 3000 ՀՀ դրամը՝ գործատուի միջոցների հաշվին, 5000 ՀՀ դրամը՝ պետության հաշվին: Կուտակային հատկացում կատարելը դադարեցվում է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդն ընդհատվելու դեպքում՝ ընդհատվելու ամսվանից: Ընդ որում, վարձու աշխատող է համարվում բացառապես գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձը (քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանք կատարող և ծառայություն մատուցող անձանց համար այս դրույթը չի գործում):

Հարց 12. Ինչի՞ հիման վրա է սահմանվել կուտակային հատկացման 10% դրույքաչափը:

Կուտակային հատկացման դրույքաչափը սահմանվել է կենսաթոշակային բարեփոխումների թիրախային նպատակների հաշվառմամբ:

Մասնավորապես, որպես կենսաթոշակային բարեփոխումների թիրախային ցուցանիշ, սահմանվել է շուրջ 45-50 տոկոս փոխհատուցման գործակիցը (այսինքն՝ կենսաթոշակի չափը պետք է կազմի աշխատավարձի շուրջ 45-50 տոկոսը):

Կուտակային բաղադրիչի շրջանակներում ձևավորվող կենսաթոշակի չափը կախված է կուտակած միջոցների չափից, ինչն էլ իր հերթին, բացի կուտակելու ժամանակահատվածից, պայմանավորված է նաև հետևյալ գործոններով.

1) կուտակվող միջոցների չափ,

2) կառավարման ներքո գտնվող կենսաթոշակային ակտիվների (պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի) եկամտաբերություն:

Հարկ է նկատի ունենալ, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունն էլ իր հերթին, կախված է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ծավալից և դրանց կառավարման քաղաքականությունից:

Ավելի փոքր չափով կուտակային վճարների դեպքում էապես նվազում է համակարգի արդյունավետությունը, քանի որ կառավարվող փոքր ծավալների ակտիվների կառավարման ծախսերը էապես բարձրանում են: Միևնույն ժամանակ, փոքր կուտակումներն ուղղակիորեն հանգեցնում են փոքր կենսաթոշակների, ինչը չի լուծում բարեփոխման հիմքում դրված խնդիրը:

Հարց 13. Ե՞րբվանից են կուտակային բաղադրիչի մասնակիցները սկսել կատարել սոցիալական վճարներ:

Կուտակային բաղադրիչն ուժի մեջ է մտել 2019թ. հուլիսի 1-ից:

Վարձու աշխատողներն առաջին անգամ սոցիալական վճարները կատարել են մինչև 2019թ. օգոստոսի 20-ը՝ 2019թ. հուլիս ամսվա աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտներից:

Կուտակային բաղադրիչի մասնակից հանդիսացող անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղվածները սոցիալական վճարները կատարել են տարեկան կտրվածքով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը (առաջին անգամ՝ մինչև 2020 թվականի մայիսի 1-ը):

Հարց 14. Ո՞վ է հաշվարկում և փոխանցում աշխատողի սոցիալական վճարը:

Վարձու աշխատողի սոցիալական վճարը հաշվարկում և փոխանցում է գործատուն, որպես հարկային գործակալ, յուրաքանչյուր ամիս հարկային մարմին ներկայացնելով անձնավորված հաշվետվություն՝ աշխատողին վճարված եկամուտների և կատարված սոցիալական վճարի վերաբերյալ:

Անհատ ձեռնարկատերը, ինքնազբաղված անձը և աշխատողը, որի գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ինքնուրույն են հաշվարկում և ԱՀ պետական գանձապետարան փոխանցում սոցիալական վճարները:

Հարց 15. Ո՞րն է գործատուի դերը բազմաստիճան կենսաթոշակային համակարգում, մասնավորապես՝ կուրակային բաղադրիչում:

Կուտակային բաղադրիչում գործատուն ունի երկու հիմնական դեր՝

1. Նվազագույն աշխատավարձ ստացող վարձու աշխատողների սոցիալական վճարների կատարումը՝ համապատասխան չափով բարձրացնելով անվանական աշխատավարձը այնպես, որ եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի պահումից հետո աշխատողի տնօրինվող եկամուտը պակաս չլինի «Նվազագույն աշխատավարձի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված գումարից:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ նվազագույն աշխատավարձը Արցախի Հանրապետությունում կազմում է 68 000 ՀՀ դրամ:

2. Հարկային գործակալի գործառույթների իրականացում.

Օրենքով սահմանված ժամկետներում և կարգով էլեկտրոնային եղանակով հարկային մարմնում գրանցում է իր հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին և պայմանագրային եկամուտ ստացողներին, «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով եկամտային հարկը հաշվարկելու և վճարելու համար սահմանված

Ժամկետներում ու «Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքով սահմանված դրույքաչափով հաշվարկում և փոխանցում է կուտակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների սոցիալական վճարները, «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում անձնավորված հաշվարկ:

Նախորդ հաշվետու ժամանակահատվածների համար ներկայացված սոցիալական վճարի հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում (բացառապես էլեկտրոնային եղանակով) հարկային մարմին է ներկայացնում ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակահատվածների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ:

Հիշենք. եթե գործատուն չի հանդիսանում հարկային գործակալ, ապա սոցիալական վճարների հաշվարկի և փոխանցման պարտավորությունը կրում է մասնակիցը:

Հարց 16. Մասնակիցը սոցիալական վճարումներին ֆիզիկական մասնակցություն ունենում է, թե՞ ոչ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքի համաձայն, վարձու աշխատողի կամ պայմանագրային եկամուտ ստացող մասնակցի համար սոցիալական վճարները հաշվարկելու և փոխանցելու պարտականությունը (Հոդված 7, մաս 1-ին) կրում է գործատուն, որպես հարկային գործակալ:

Գործատուն, օրենքով սահմանված ժամկետներում և կարգով էլեկտրոնային եղանակով հարկային մարմնում գրանցում է իր հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին և պայմանագրային եկամուտ ստացողներին: Գործատուն (որպես հարկային գործակալ, «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով եկամտային հարկը

հաշվարկելու և վճարելու համար սահմանված ժամկետներում) «Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքի 6-րդ հոդվածում սահմանված դրույքաչափով հաշվարկում և փոխանցում է մասնակից հանդիսացող վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների սոցիալական վճարները: Այլ կերպ ասած, վարձու աշխատողի կամ պայմանագրային եկամուտ ստացողի կարգավիճակ ունեցող մասնակիցը ֆիզիկապես չի առնչվում սոցիալական վճարների կատարման հետ:

Մասնակիցն ինքն անձամբ է կատարում սոցիալական վճարները հետևյալ դեպքերում.

ա. եթե հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ ինքնազբաղված անձ,

բ. եթե վարձու աշխատող կամ պայմանագրային եկամուտ ստացող մասնակցի գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից:

Ընդ որում, մասնակիցը, որպես անհատ ձեռնարկատեր կամ ինքնազբաղված անձ՝ սոցիալական վճարը կատարում է տարեկան կտրվածքով, մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը:

Իսկ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատող մասնակիցը սոցիալական վճարը կատարում է ամսական կտրվածքով՝ գործատուի համար սահմանված ժամկետներում (մինչև հաջորդ ամսվա 20-ը):

Հարց 17. Անձը կարո՞ղ է, արդյոք, վերահսկել՝ իր գործատուն կապարել է սոցիալական վճար, թե՞ ոչ:

Անձը կարող է դիմել գործատուին՝ պահանջելով համապատասխան տեղեկատվություն կատարված սոցիալական վճարների փոխանցումների մասին: Գործատուից հավաստի տեղեկություններ չստանալու կամ կասկածներ ունենալու դեպքում, անձը կարող է դիմել հարկային մարմին: Հարկային մարմինը վարում է

անձանց եկամուտների, վճարված եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառում: Յուրաքանչյուր վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և ինքնազբաղվածի համար հարկային մարմնում բացվում է անհատական հաշիվ, որտեղ գրանցվում են, թե որքա՞ն է կազմել տվյալ անձի եկամուտը՝ հաշվետու ժամանակահատվածում (վարձու աշխատողի համար՝ յուրաքանչյուր ամիս, անհատ ձեռնարկատիրոջ և ինքնազբաղվածի համար՝ յուրաքանչյուր տարի), ինչքա՞ն են կազմել եկամտային հարկի և սոցիալական վճարի գումարները և որքա՞ն սոցիալական վճար է կատարվել:

Մասնակիցն իր կուտակած կենսաթոշակային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է ստանալ հաշվի օպերատորների գրասենյակներից:

Հարց 18. Ի՞նչ է անձնավորված հաշվառումը: Արդյո՞ք մասնակիցը հնարավորություն ունի տեսնել հարկային մարմնում իր անհատական հաշիվը՝ հավաստիանալու համար, որ իր փոխարեն գործադրուն կատարել է բոլոր վճարումները և տեսնել վճարումների պատմությունը:

Հարկային մարմինը աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով վարում է ձևակերպված աշխատողների և նրանց գործատուների, ինչպես նաև ինքնազբաղվածների, անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված սոցիալական վճարի և եկամտային հարկի անձնավորված հաշվառում: Յուրաքանչյուր աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և ինքնազբաղվածի համար հարկային մարմնում բացվում է անհատական հաշիվ, որը հիմնված է անձի հանրային ծառայությունների համարանիշի վրա: Անձի անհատական հաշվում գրանցվում է, թե որքա՞ն է կազմել տվյալ անձի բազային եկամուտը (աշխատավարձը և քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացվող այլ եկամուտները) հաշվետու ժամանակահատվածում (վարձու աշխատողի համար յուրաքանչյուր ամիս, անհատ ձեռնարկատիրոջ և ինքնազբաղվածի համար յուրաքանչյուր տարի), ինչքա՞ն են

կազմել եկամտային հարկի և սոցիալական վճարի գումարները և որքա՞ն կուտակային վճար է կատարվել:

Անձնավորված հաշվառման համակարգում ամփոփված տվյալները հասանելի են անհատական հաշվի իրավատիրոջ համար: Նա կարող է դիմել հարկային մարմին՝ իր անհատական հաշվի քաղվածքը ստանալու համար:

Աշխատողի այլ գործատուի մոտ աշխատանքի փոխադրվելու (գործատուի փոփոխության) դեպքում, աշխատողի կողմից եկամտային հարկ և սոցիալական վճար կատարելու (հարկային գործակալի) պարտականությունը կատարելու է նոր գործատուն: Այդ աշխատողի համար հարկային մարմնում անհատական նոր հաշիվ չի բացվում, այլ ստացված տեղեկատվությունը մուտքագրվում է աշխատողի արդեն իսկ բացված անհատական հաշվին:

Հարց 19. Մասնակցի համար սոցիալական վճարումները չկատարելու կամ ուշացումով կատարելու դեպքում, տույժեր սահմանվու՞մ են, թե՛ ոչ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքը հստակորեն սահմանում է, որ սոցիալական վճար կատարելու պարտավորություն ունեցող անձինք պատասխանատվություն են կրում սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար:

Ըստ այդմ,

1) վարձու աշխատողների համար սոցիալական վճարումները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար տույժը վճարում է գործատուն (բացառությամբ՝ երբ գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից),

2) անհատ ձեռնարկատիրոջ և հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի համար սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար տույժ չի հաշվարկվում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցը, որպես ինքնագրադրված անձ, ստացված եկամուտներից սոցիալական վճար կատարում է կամավորության սկզբունքով՝ սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար, նույնպես տույժեր չեն հաշվարկվում:

Սոցիալական վճարները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սոցիալական վճարը հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող անձը (հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված սոցիալական վճարի գումարի 0.075 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Հարց 20. Ի՞նչ է կամուրջ հաշիվը

Կամուրջ հաշիվը ֆինանսական ոլորտում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի միասնական գանձապետական հաշվում բացված ենթահաշիվն է, որին մուտքագրվում են սոցիալական վճարները՝ մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու համար:

Հարց 21. Որքա՞ն կարող է սոցիալական վճարի գումարը մնալ կամուրջ հաշվում:

Եթե գործատուն ամբողջությամբ մարել է տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկված սոցիալական վճարի ընդհանուր գումարը, այդ թվում՝ դրանք ուշացնելու համար հաշվեգրված տույժերը, ապա սոցիալական վճարի գումարը կամուրջ հաշվում կարող է մնալ առավելագույնը 10 օր, որն անհրաժեշտ է հարկային մարմնին սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկությունները մշակելու համար: Եթե ներկայացված տեղեկություններում չկան սխալներ և կամուրջ հաշվին մուտքագրվել են հաշվարկի մեջ նշված ամբողջ սոցիալական վճարների գումարը, հարկային մարմինը վճարման հանձնարարականներ է ուղարկում գանձապետարան՝ կամուրջ հաշվին

մուտքագրված գումարներից և ԱՀ պետական բյուջեից համապատասխան գումարները մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու համար:

Հարց 22. Կուտակային միջոցները ենթակա՞ են արդյոք բռնագանձման անձի՝ ֆինանսական պարտավորությունների դիմաց:

Ոչ, մասնակցի կենսաթոշակային կուտակումներն անձեռնմխելի են, ուստի ֆինանսական պարտավորությունների դիմաց դրանց վրա բռնագանձում չի կարող տարածվել՝ մինչև նրա կենսաթոշակային տարիքը լրանալը:

Հարց 23. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագիր ունեցող՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անհատ ձեռնարկատերը արդյո՞ք պետք է վճարի «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված սոցիալական վճարներ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը «Եկամտային հարկի մասին» օրենքի համաձայն ստացման ենթակա տարեկան հարկվող եկամուտն է: «Եկամտային հարկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է, եթե օրենքով հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի համաձայն՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողների կողմից հավաստագրի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև հավաստագրի գործողության ժամկետի ավարտը տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից (բացառությամբ օտարմանը նախորդող առնվազն 2 տարի առաջ ձեռք բերված հաշվողական և համակարգչային տեխնիկայի, հաղորդակցական սարքավորանքի օտարման) ստացվող եկամուտները դիտվում են որպես նվազեցվող եկամուտ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի

պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված անհատ ձեռնարկատերերի համար եկամտային հարկի հարկման օբյեկտի բացակայության դեպքում սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ չի առաջանում: